ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՂՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝

գ. Ղուկասավան,

Արամի 39

Հեռ. - 093050461

E-mail –ghukasavan@schools.am

05.09.2023թ.

N 52

ՀՀ ԿԳՄՍ նախարարության

գլխավոր քարտուղար՝

Հասմիկ Հակոբյանին

Հարգելի տիկին Հակոբյան

Ձեզ ենք ներկայացնում մաթեմատիկայի և քիմիայի ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարության տեքստը: Խնդրում ենք 2023թ. –ի սեպտեմբերի 6-ին ապահովել հայտարարության տեքստի հրապարակումը ՀՀ ԿԳՄՍ նախարարության կայքէջում:

Կից՝ մաթեմատիկայի և քիմիայի ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 էջ:

Կանխավ շնորհակալություն:

Դպրոցի տնօրեն՝ /Ռ. Ահարոնյան/

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի <<Ղուկասավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (5 դասաժամ), քիմիայի (8 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում պռանձին::

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փատաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **սեպտեմբերի 6 –ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 – ից 15:00-ը,** բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 25-ին՝ ժամը 15:00-ին,** Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ղուկասավան, Արամի փողոց 39:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /093/ 05-04-61 հեռախոսահամարով: